ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ
ԱՌԸՆԹԵՐ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀՐԱՄԱՆ

«01» «սեպտեմբեր» 2003 թվականի N110-Ա

ՋՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Ջրային օրենսգրքի 86-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի «Հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության հսկողության և գնման կարգը սահմանելու մասին» N 686-Ն որոշման պահանջների,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Ջրային համակարգերի օգտագործման և պահպանության տեխնիկական հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել Ջրային համակարգերի օգտագործման և պահպանության տեխնիկական հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Ջրային համակարգերի օգտագործման և պահպանության տեխնիկական հանձնաժողովի նախագահ Հ.Թոքմաջյանին՝ տասնօրյա ժամկետում սահմանված կարգով ՀՀ ջրտնտպետկոմիտե ներկայացնել տեխնիկական հանձնաժողովի գործունեության հետ կապված ծախսերի նախահաշիվը՝ 2004-2006 թվականների Հայաստանի Հանրապետության պետական բյուջեների նախագծերում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի տարեկան պահպանման ծախսերի կազմում նախատեսելու համար:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

C:\Arax\Hraman\kazm.doc

Հավելված N2

ՀՀ ջրտնտպետկոմիտեի նախագահի
«01» սեպտեմբեր 2003թ.
N 110 հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՋՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Ջրային համակարգերի օգտագործման և պահպանության տեխնիկական հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով), մշտապես գործող հանձնաժողով է, որն ստեղծվում է ջրային համակարգերի հիդրոտեխնիկական կառուցվածքների (այսուհետ՝ ՀՏԿ) զննման, ջրային համակարգերի անվտանգության ապահովման, արդյունավետ օգտագործման և պահպանության ծրագրերի ուսումնասիրության, ինչպես նաև այդ ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ մասնագիտական եզրակացություններ տալու նպատակով:

1.2. Հանձնաժողովն ստեղծվում և իր գործունեությունն իրականացնում է համաձայն ՀՀ ջրային օրենսգրքի 86-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 8-ի «Հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության հսկողության և զննման կարգը հաստատելու մասին» N686 որոշման, ինչպես նաև՝ սույն կանոնադրությամբ:

1.3. Հանձնաժողովի կազմը հաստատվում է ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի (այսուհետ՝ ՀՀ ջրտնտպետկոմիտե) նախագահի հրամանով՝ հաշվի առնելով շահագրգիռ պետական կառավարման մարմինների առաջարկությունները:

1.4. Հանձնաժողովի գտնվելու վայրն է՝ 375010, ք. Երևան, Վարդանանց 13ա:

2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2.1. Հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով:

2.2. Նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը, որը նշանակվում է ՀՀ ջրտնտպետկոմիտեի նախագահի հրամանով և պարտադիր կարգով պետք է ունենա հիդրոտեխնիկայի բնագավառում գիտական բարձրագույն (դոկտորի) աստիճան:

Հանձնաժողովի նախագահը՝

ա) վարում է հանձնաժողովի նիստերը: Իր բացակայության դեպքում այդ լիազորությունը հանձնարարում է հանձնաժողովի անդամներից որևէ մեկին.

բ) ապահովում է հանձնաժողովի բնականոն գործունեությունը.

գ) հանձնաժողովին է ներկայացնում հանձնաժողովի նիստերի օրակարգերի նախագծերը.

դ) ստորագրում է հանձնաժողովի որոշումները.

ե) ըստ անհրաժեշտության նախնական քննարկման և եզրակացություն տալու համար ջրային համակարգերի նախագծումը, շինարարությունը և օգտագործումն իրականացնող կազմակերպություններին է ուղարկում հանձնաժողովի կողմից քննարկվող նյութերը.

զ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 86-րդ հոդվածի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի «Հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության հսկողության և գնման կարգը սահմանելու մասին» N686-Ն որոշմամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

2.3. Հանձնաժողովն իր նիստերը գումարում է ըստ անհրաժեշտության, սակայն ոչ պակաս, քան երեք ամիսը մեկ անգամ:

2.4. Հանձնաժողովն իր լիազորությունների սահմաններում կայացնում է որոշումներ, որոնք ստորագրում և հրապարակում է հանձնաժողովի նախագահը:

2.5. Հանձնաժողովի նիստերը գումարվում են հանձնաժողովի որոշմամբ: Նիստերին կարող են հրավիրվել այլ անձինք:

2.6. Նիստերն անցկացվում են հայերեն լեզվով, ըստ անհրաժեշտության՝ ապահովվում է նաև համաժամանակյա թարգմանություն:

2.7. Իր լիազորություններն իրականացնելու համար Հանձնաժողովը ձևավորում է աշխատանքային խմբեր: Աշխատանքային խմբերում, պայմանագրային հիմունքներով կարող են ներգրավվել ջրային բնագավառի մասնագետներ, տնտեսագետներ, իրավաբաններ, անհրաժեշտության դեպքում՝ այլ ոլորտի մասնագետներ, օպերատորներ, տեխնիկներ, սպասարկող աշխատակիցներ: Աշխատանքային խմբերի վարձատրության կարգը և չափը սահմանվում է ՀՀ ջրտնտպետկոմիտեի կամ համապատասխան ծրագրի ղեկավարման խորհրդի կողմից: Աշխատանքային խմբերում հանձնաժողովի անդամների աշխատանքը վարձատրման ենթակա չէ:

2.8. Աշխատանքային խմբերի հաշվետվությունների կարգը սահմանվում է հանձնաժողովի կողմից:

2.9. Իր լիազորություններն իրականացնելու համար հանձնաժողովը կազմում է ծրագրեր և աշխատանքային պլաններ:

2.10. Հանձնաժողովն իր անդամների միջոցով հանդիպումներ է ունենում ջրօգտագործողների հետ, ուսումնասիրում նրանց կողմից բարձրացված խնդիրները և ջրային բնագավառի պետական մարմիններին ու ծրագրերի ղեկավարման խորհուրդներին տալիս առաջարկություններ:

2.11. Հանձնաժողովի աշխատանքների քարտուղարությունը վարում է հանձնաժողովի աշխատակազմը: Հանձնաժողովի գործունեության կազմակերպչական և պահպանման տարեկան ծախսերը ներառվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում:

2.12. Հանձնաժողովի նիստը սկսվում է հանձնաժողովի անդամների գրանցումով: Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Հերթական նիստը սկսվում է օրակարգի հաստատմամբ: Նիստը վարելու կարգի նկատմամբ հանձնաժողովի անդամները առաջարկություններ անում են մինչև հարցի զեկուցումը և քվեարկությունից առաջ: Զեկուցողի առաջարկությունը քվեարկության է դրվում առաջին հերթին: Զեկուցողի առաջարկությունը չընդունվելու դեպքում քվեարկվում են մյուս առաջարկությունները: Այն առաջարկությունը, որն իր բովանդակությամբ հակառակ է արդեն ընդունված առաջարկությանը, քվեարկության չի դրվում: Նախագիծն ընդունվում և նրա մեջ փոփոխություններ են արվում հանձնաժողովի անդամների ընդհանուր ձայների մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ: Հանձնաժողովի անդամների ընդհանուր ձայների 1/3-ի պահանջով առանձին հարցերի վերաբերյալ անց է կացվում գաղտնի քվեարկություն: Այդ դեպքում հանձնաժողովը իր կազմից ընտրում է հաշվիչ հանձնաժողով, որն իր կազմից ընտրում է հաշվիչ հանձնաժողովի նախագահ և քարտուղար: Հաշվիչ հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նրա անդամների ձայների մեծամասնությամբ: Քվեաթերթիկները պատրաստվում են հաշվիչ հանձնաժողովի կողմից սահմանված ձևով և կարգով:

2.13. Հանձնաժողովի պահանջով ջրային համակարգերի նախագծումը, շինարարությունը և օգտագործումն իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչները մասնակցում են հանձնաժողովի նիստերին և պարզաբանումներ տալիս քննարկվող հարցերի վերաբերյալ: Հանձնաժողովը կարևոր հարցերի վերաբերյալ կարող է կազմակերպել ընդլայնված լսումներ՝ հրավիրելով պաշտոնատար անձանց և մասնագետների:

2.14. Հանձնաժողովը տարեկան մեկ անգամ հրապարակայնորեն հանդես է գալիս կատարված աշխատանքների մասին հաղորդմամբ:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ

3.1. Հանձնաժողովի անդամն իր աշխատանքներն իրականացնում է հասարակական հիմունքներով:

3.2. Հանձնաժողովի անդամին տրվում է համապատասխան վկայական:

3.3. Իր մասնագիտական պարտականություններն իրականացնելու, միջազգային փորձի ուսումնասիրության և մասնագիտական հանձնաժողովներին մասնակցելու համար հանձնաժողովի անդամը կարող է գործուղվել:

3.4. Հանձնաժողովի անդամը՝

ա) հանձնաժողովի աշխատանքներում առաջնորդվում է իր գիտելիքներով և համոզմունքներով.

բ) պարտավոր է մասնակցել հանձնաժողովի նիստերին, չի կարող ետ կանչվել հանձնաժողովի կազմից:

3.5. Հանձնաժողովի անդամի գործունեությունը հանձնաժողովում կարող է դադարել՝

ա) հանձնաժողովի անդամի ցանկությամբ.

բ) հանձնաժողովի նիստերից պարբերաբար անհարգի բացակայությունների առկայության դեպքում՝ հանձնաժողովի անդամների ձայների որակյալ մեծամասնությամբ (ձայների առնվազն 2/3) ընդունված որոշման հիման վրա:

Հավելված N1
ՀՀ կառավարությանն առընթեր
ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի
«.....» օգոստոսի 2003թ. N..... հրամանի

ԿԱԶՄ
ՋՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1.	Թոքմաջյան Հովհաննես	- Հիդրավլիկական հետազոտությունների հայկական ազգային ընկերության նախագահ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (հանձնաժողովի նախագահ).
2.	Ավագյան Աշոտ	- ՀՀ էներգետիկայի նախարարության շահագործման տեխնիկական վարչության գլխավոր մասնագետ.*
3.	Պեպանյան Յուրի	- ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի ջրատնտեսական ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող վարչության պետի տեղակալ, ոռոգման համակարգերի բաժնի պետ
4.	Գաբայան Գրիգոր	- «Հիդրոէներգետիկա» ՍՊ ընկերության տնօրեն, տեխնիկական գիտությունների թեկնածու (համաձայնությամբ).*
5.	Գասպարյան Մամիկոն	-ՀՀ գյուղատնտեսության նախարարության հողերի մոնիտորինգի և մելիորացիայի բաժնի պետ, տեխնիկական գիտությունների թեկնածու.
6.	Եսայան Հայկ	- ՀՀ բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության բաժնի պետ.*
7.	Թարվերդյան Ալեքսեյ	- «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի նախագծի գլխավոր ինժեներ, տեխնիկական գիտությունների թեկնածու.
8.	Հարությունյան Հարություն	- ՀՀ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության ջրավազանային հսկողության բաժնի գլխավոր մասնագետ.*
9.	Մարգարյան Ալբերտ	- Ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտի գլխավոր ինժեներ, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ (համաձայնությամբ).
10.	Մարգարյան Թեմուր	- ՀՀ քաղաքաշինության նախարարության «Հիդրոտեխնիկական կառույցներ» ՊՀ-ի տնօրենի տեղակալ, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, Հայաստանի Ճարտարագիտական ակադեմիայի ակադեմիկոս.*
11.	Մարկոսյան Աշոտ	- ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ, տնտեսագիտության դոկտոր.*
12.	Նազարյան Լյուդվիգ	- ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության տեխնածին աղետների և մոնիտորինգի բաժնի պետ.*
13.	Սահրադյան Վարդան	- ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ճյուղային տնտեսության ծրագրերի վարչության, գյուղատնտեսության, ջրային տնտեսության և բնապահպանության ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ, տեխնիկական գիտությունների թեկնածու.*
14.	Փետևոտյան Ռազմիկ	- Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի հիդրոտեխնիկական և քաղաքային տնտեսության ֆակուլտետի դեկան, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, (համաձայնությամբ).
15.	Խունդկարան Վալերի	-

---

* նշված թեկնածությունների համար ստացվել են համապատասխան նախարարությունների և գերատեսչությունների համաձայնությունը: